

Prigun Pymun

67467

Կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց ՎԱՋԻՆ ԳԱՐՐԻՆԵՂՅԱՆԸ

Իշխան Մ.

Ի 684 Երկերու / Թանաստեղծ., արձակ, դրամատուրգիա, գրականագիտ. / Մուշեղ Իշխան, (Կազմ., ծանոթագր. և առաջաբանը գրեց Վ. Գարրիելյանը). — Եր.: Նաիրի 1990. — 592 էջ.

Ափյուռքահայ նշանավոր բանաստեղծ, արձակագիր ու դրամատուրգ Մուշեղ Իշխանի ներկա ժողովածուում տեղ են գտել նրա բանաստեղծական ժառանգության գերակշիռ մասը, ինչպես նաև նրա մուշներ թատերգությունից, արձակից ու գրականագիտական էջերից:

4702080000(125)

Ի-----75-90

ԳՄԴ 84 ՉՄ

705(01) 00

ISBN 5-550-00483-X

© «Նաիրի», կազմելու, առաջաբանի ծանոթագրելու և նկատման համար 1990

ԿՅԱՆՔ ԵՎ ԵՐԱԶ

Քանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, բնագետ, հրապարակախոս ու մանկավարժ Մուշեղ Լշիանի անունը արդեն կես դարից ավելի է, որ հնչում է Արևմտում: Քանաստեղծական առաջին իսկ ծաղուկածուն, որ լայն տեսավ 1938-ին, Քեյրտրամ, թե՛ գրական շրջանների, թե՛ ընթերցող լայն զանգվածների կողմից ընդունվեց սիրով: Հետո, տարիների վաստակով, նա հաստատեց իր տեղը Ափյուռֆի գրականության մեծերի կողքին, գտնալով արևմտահայ քանաստեղծության ավանդների ճշմարիտ ժառանգորդն ու շարունակողը, հայ դպրության նոր մակը՝ անցյալի գրող-մանկավարժներին տրված այս որակման լիաժեռ յմաստով: Իր ողջ կյանքում եկիրվելով հայ գրականությանն ու դպրոցին, հայրենիքից հեռու, հայրենի տունը կորցած քանաստեղծը հայ լեզուն գտավ քրպես փոխաբերիչ տուն, իր այդ եկիրումը գրական մուսաֆի դեր թռաչին օրերին հնչեցնելով որպես քանաստեղծություն, որ սրտի խոսք էր ու հավատա հանգանակ:

*Հայ լեզուն տունն է հայուն, աշխարհի շորս ծաղերուն,
Ուր կը մտնե ամեն հայ՝ իբրև տանտեր հարազատ,
Կ'ըստանա սեր ու սնունդ, սրտի հպարտ ջնձություն,
Եվ բուրյանեն ու բուրբեն հոն կը մնա միշտ ազատ:*

Ու այս տողերը տարիներ շարունակ հնչեցին մանկանց շուրթերից, գրպոցում, թե հանդեսների ժամանակ, և հնչեցին արիչ քանաստեղծություններ ու քատեախաղեր բեմերից, և նրա նոր գրքերին ընթերցողը միշտ սպասեց: Ափյուռֆի՝ ընթերցողը: Քայց Ափյուռֆի լավագույն քանաստեղծը հայրենի ընթերցողին հասնելու համար պիտի սպասեր մինչև ձնհայ ու նոր ջրերի հոսկը:

Մուշեղ Լշիանը (ձևաներենյան) ծնվել է Քուրեխայի Անկարայի նահանգի Արվերի-Չիտար գյուղաքաղաքում, 1914 թ.: Մամուլում հանախ նշանակումը թիպան է հիշատակվել 1913-ը (սուր իսկ պատճառով և ծերերդյան իմ ամբողջին եկիրված «Նուկե սլուն» ծաղուկածուն լայն է տեսել իմն թ.), սակայն հեղինակը հետագայում նշտել է այն, երբ 37 տա-

րիներէի բաժանումից հետո հանդիպել է հարազատ մօրը (նրան ուղեկցել է խնամել է հորեղբոր կիծը):

1915-ին աւագընդել է նաև նրանց ընտանիքը: Պատերազմից հետո վերադարձել են, հայրը մահացել է 1918-ին, հետո կրկին ախտ: Ապա... ավելի լավ է խոսքը տանք իրեն, հետևելով 1988-ին դրած «Լենինականա-գրայանը»։ «Մանկությանն առաջին 4—5 տարիները անցած են ախտի առաւելման մեջ, առաջին մէծ պատերազմի ընթացքին, նոր աչք բացող երեխայի անգիտակցութեամբ: Իսկ երբ գիտակից մանկության սեմք ռոտ դրի՝ դարձյալ ախտը, վախ ու փախուստ տեսա, այս անգամ կեանքային շարժումին հետևանքով:

Մանկությանն վերջին լավագոյն տարիները անցած են Դամասկոս, ուր հաջորդաբար հանախած եմ Կարողիկե, Ավետարանական և Առաքելական վարժարաններ՝ մեկական կամ երկուական տարի: Ի վերջո վկայական ստացած եմ Հայոց Ազգային վարժարանին 1928-ին:

Արհեստ սովորելու ձախուրդ փորձերն ետք, հաջողեցա ինքզինես նետել Կիւրոսի Մեկոնյան վարժարանը, ուր մեացի դպրոցական երկու տարե-չրջան, աշակերտելով Հ. Օշականին: Ուսուցիչներես միայն իր անունը կը հիշատակեմ, որովհետև իր անունին հմային էր զիս հոն հաջողը և իր գրական բնութամներն ալ հետագային խոր ազդեցութեան ունեցան իմ կազմավորման մեջ:

Մեկոնյանի ընթացքը առանց ավարտելու, երբ արձակուրդի եկա Պեյ-րաթ 1930-ին, դարձա գիշերօթիկ սան Շանթի և Աղբալյանի նոր բացած Հայ նեմարանին: Հինգ տարվան երջանիկ ուսանողական շրջան մը և անա նեմարանի վկայականով զինված՝ ուսուցիչ նույն հաստատութեան մեջ:

Բարձրագոյն ուսման երազը 1938-ին զիս տարավ մինչև Պելնիա, ուր երկու տարի նետեցա Պրոյոմսիի համալսարանին մանկավարժութեան և գրականութեան նյութերուն (միաժամանակ մասնակցելով Քրոյսելի հա-մալսարանում Եփոզացոս Աղունցի հիմնադրած հայագիտական ամբիոնի դասընթացներին — Վ. Գ.):

Հիբրեի բնկէցողցած կրակներուն մեջն փախուստ 1940-ին: Կրկին Պեյրոթ և կրկին ուսուցիչ իմ հարազատ օճախիս՝ նեմարանի մեջ, ուր մինչև այսօր կը շարունակեմ ավանդել հայ լեզու և գրականութեան, մանկավարժութեան և հոգեբանութեան: (Երկար տարիներ նաև անօրենի տեղակալ — Վ. Գ.): Իմ աշխարհու եղած է միշտ դպրոց ու դաս, զիրք ու զբաղանքութեան:

Սկսած եմ գրել 16—17 տարեկանիս: Առաջին բանաստեղծութեան տուված է 1932-ին «Հայրենիք» ամսագրին մեջ, երբ նկատի շտնենք պատանեկան հախածներով կատարված այլ հրատարակութեաններ:

Այդ լուկանն է զի. ուսուցչական պաշտօնիս հետ միաստեղբար, հավատարիմ մնացած եմ գրողի կոչումիս, բանի մը տարի անգամ մը նրատարակելով բանաստեղծութեան կամ արձակ գործերու նվիրված հատուկներ:

Ամբողջ տասնամյակ մը, 1941—1951-ի ընթացքին, եղած եմ խմբագիր

«Ազգրակ» օրաթերթի և Շաբաթօրյակի: Անկե ետքն ալ հրապարակագրական ճողվածներով հաճախ արտահայտված եմ նույն բերբերուն մեջ, գրական, կրթական և ազգային հարցերու մասին:

Մինչև այսօր կապված կրմեամ բաւուցիչի իմ կոչումիս, հեմարանի վերին կարգին դասաձանգելով հայ գրականօրայան, շարաքը քանի մը պահ միայն»:

Մինչև 1990 թ.: Մահը վրա հասավ այս տարվա ամռանը:

Մուշեղ Եշխանի գրական զատակը ամփոփվում է բանաստեղծական արժույթովածուներով, արձակ ու դրամատիկական երկերի յոթ գրքերով, հայ գրականօրայան դասագրքի և բն հրատարակելով ու մամուլում ցրված գրական-հրապարակախոսական, գրականագիտական բազմաթիվ հոդվածներով և ուսումնասիրություններով:



Ճիշտ է, Եշխանի բառերախաղերը, վեպերն ու վիպակները նույնպէս սիրով և բնորոշ ընթերցողը, բնածին տաղանդը հնարավորօրայան է տվել հեղինակին՝ կյանքի նշմարտօրայանը, կենսական ռիթմերը վերարտադրել այդ գործերում, անդձել լիարժեք կերպարներ ու առաջադրել հազօղ խընդիրներ, բայց նա ամենից առաջ բանաստեղծ է: Չմանրամասնելով մեծ խոսքը, փորձենք նախաչել նա բնարական հերոսին, նա աշխարհը:

Մուշեղ Եշխանի բանաստեղծական գրքերն են. «Տուններու երգը» (1936), «Երակք» (1938), «Հայաստան» (պոեմ, 1946), «Կյանք ու երազ» (1949), «Ողբույն ինչ, կյանք» (1958), «Տառապանք» (1968), «Արեւմար» (1986) և ձևակապ աշունս ժողովածուն, որ առաջին հիւնգ գրքերի ամբողջօրայանն էր, երկու նոր շաբաթի հավելումով, յույս տեսած 1963 թ.: «Տուններու երգից» մինչև «Արեւմար», այսինքն առաջին ժողովածուից մինչև վերջինը, ողբից կես դար է: Կես դար պոետիայի մեջ: Իհարկե, նաև ու ոչ միայն պոետիայի մեջ: Նվ կես դար հավատարիմ իր էտրայանը, իր ոճին:

Առաջին իսկ գրքով Մուշեղ Եշխանը գտավ արտահայտվելու ի՛ր կերպը: Ասեմք, կերպը շեն դառնում, գտնելու համար շանք շեն քափում: Պարզապէս իրականօրայան նրա ընկալումը ու նա երազը, նա արտահայտվելու կերպը բանաստեղծական էր, հենց դրանով էլ փոխանցելի ընթերցողին: Հայրենի բանաստեղծօրայան ավանդական շափ ու կշտօրայանով գրված նրա երգերի մեջ ինքնատիպօրայան շանք շէր քափված, ձեր ասես քե հին էր, բայց երիտասարդ բանաստեղծն իր մտածողօրայան կնիքն էր դրել ոչ քե ձեի վրա, այլ ձեի մեջ, քանի որ խօսողը ինքն էր, ի՛ր ներշնչումն էր: «Տուններու երգը» զնահատելով որպէս «նշմարիտ ներշնչման» արտահայտօրայան, իսկ նրա հեղինակին՝ «հաստատու ուծ մը», երկու տարի հետո յույս տեսած գրքի առիթով Արշակ Զապանյանը անձեկրա հաստատեց, քե այս երիտասարդը մեծ նոր բանաստեղծօրայանը անձնաշնչտ, հուրք տաղերով հոխացնելու կոչված լավագոյն ուծերեն մեկն է»: Գնահատելով նաև բանաստեղծի լեզվի մաքրօրայանը, տաղաշափօրայան նկատմամբ վերաբերմունքը, Զուպանյանը կարեւորեց «անձնաշնչտօրայանը», որը

է՛ «զգայնություն մը բարձ, քրքրուն, ինքնուրույն, մտածումով տողբ-
ված»:

Իրավ, այս հատկանիշները, որ իրապես բնորոշ էին նրա առաջին ձե-
ղովածունքին, շարունակվեցին, խորացան և ընդգրկվեցին հաջորդ գր-
քերում:

Խառնվածով բնարեգու է Մուշեղ Իշխանը, իրենին ու աշխարհին ուղ-
ղբված նրա հայացքը մեղմ և, բարձի ու խոնարհ: Աշխարհի նրա դիտա-
կումը շիկացած զգացմունքներ չի ծնում՝ նիշ. գայրույթ, ցնծություն,
հրապարակախոսի կիրք. կոչ: Մնում է՝ խոհ, հաբցադրում, տրամուշ, բո-
ղոք (Երբեմն-Լերբևն միայն բուժուշտի), ծնում է՝ ուստիություն՝ գոհու-
նակ, ևրանավետ զգացում: Ներշնչումը անմիջական է, որևէ դեպքի, պատ-
մության, անձի, խոսքի հոգեկան արծազանգ, իմաստավորում: Եվ որով-
հետև իրականությունը հանախ է հառնում ցավալի ու տխուր պատկերնե-
րով, Իշխանի խոհը նաև դառնում է տրամում, բախմարե, Երբևն նաև՝
հռուես: Բայց բնարական նրա խառնվածքը, բանաստեղծի Երազող հոգին,
հայի նակատագրի ու մարդ արտածի նկատմամբ ունեցած հավատն ու
քաղերտությունը ստեղծում են մի հետաքրքիր հավասարակշռություն նրա
խոսքի մեջ, և բանաստեղծի բնարական կեղտերը դառնում է մտեծիմ ըն-
թերցողին, ամբողջանում և, որպես կենսասեր հոգի, Իշխանի խոհը, «Մտա-
ծումը», իր մեղմ ու խոնարհ կույրան թելադրանով զբուսովում է պատմա-
դական պարզ ձևերի մեջ, խոսքի հանդարտ ընթացով, առանց բարդա-
ցումների ու սերևերանքների, առանց ընդգծված պատկերավորության, բայց
և տպավորիչ: Նրա և՛ ուրախությունը, և՛ քախիծը հաղորդական են, նրա
խոսքը ասես մտեծիմ մեկը արտամտ զգույցն է: Այդ հատկանիշը լավ
և նկատելի Վահե-Վահյանը դեռևս նրա առաջին գրքին նվիրված գրախո-
սության մեջ: «Ոչխալով հանդերձ անձնական, — գրում է Վահյանը, — այդ
քախիծն ունի ընդհանրական, հեռավար նաև դյուրահաղորդ ու համակեր-
թի նկարագիր մը: Իր մտածումին վերև՝ ծփանուտ մշուշ մըն է ան. որ
ցավագին զգայություններու սարսուղը կը քափն տողերուն խորը, զայն
հոսեցնելու համար հետո մեր մխերուն մեջ»: Ուրեմն «Մտածումի» խո-
հը պարուրող զգայությունն է, որ խտանալով հոսում է առդեի միջով ու
հաղորդվում ընթերցողին:

Արևմտահայ բանաստեղծության անմիջական շարունակությունն է սփյուռ-
եահայ բանաստեղծությունը, նոր լուսումնեղով, սեռչակի փոխանցող օղակ-
ներով, բայց Իշխանի փոխանցող շե, նա ամբողջովին սփյուռեղյան սե-
րունդ էր, իր գիտակցական կյանքը սկսվել էր տարագրության մեջ: Մե-
ծավոր Արևելի մեջ սփյուռեղյան բանաստեղծության սկզբնավորումն ու
զարգացումը կապված է զխաղաղապես 30-ական թվականների հետ, և
Մուշեղ Իշխանը բանաստեղծությամբ իր գրույցը աշխարհի հետ սկսեց
ա՛յդ տարիներից: Եվ նա առաջիններից մեկն էր:

Ի՞նչ էր տեսնում, ի՞նչպես էր կյանքը վերապրում նրա սերունդը: Ի՞նչ
էր սփյուռքը նոր ասպարեզ իջած բանաստեղծների այդ սերնդի համար,
որոնց մեջ իրենց անհատականությամբ ընդգծվեցին ու առանձնացան Վա-
հե-Վահյանը, Մուշեղ Իշխանը, Անդրանիկ Մասուկյանն ու Ժալ Հակոբյանը

(Մերձավոր Արևելքում): «Սփյուռք այդ տարիներում, — մի առիթով գրել է Վանն-Վանյանը, — շքեղված վեճ էր տակալին, շղթողած գայրույթ, շքազնցած դիւ: Ուրուխյուն էր ան, «անիրեն ավելցած» մանուկներու շվարած բազմություն, որ դառնալի առաջ վազվան հայր, կը կարտեր պաշտպանություն աւ խնամքի: Կորսված անուշաբայուններու կարտան էր Սփյուռք, սիրտ առչուհող վերհուշ: Տեական գրկաններու և քարացած դառնություններու հետ ամենօրյա շփումեն տարօրինակապես դյուրագրգիւ դարձած շիւղերու բարբոխումն էր երբեմն... դասալիւթյուն էր նաև, եվրոպական ուսումններուն մեջ մանավանդ, — ուրացում և ուծացում: Ես այն ատեն անդու թախանում և Սփյուռք հացի և երդիքի շափ նաև լույսի համար...»:

Այդ Սփյուռքի զգացողությամբ գրական ասպարեզ մտավ քառասունը Մուշեղ Եղիանը: Եվ առաջին ժողովածուն՝ «Տուններուն երգը» խորագրով, որ լույս տեսավ 1936-ին, ա՛յդ Սփյուռքի մասին բանաստեղծի բնարական խանն էր, ավելի երջտ՝ նրա բանաստեղծական, զգայական վերասլուծումը, որ խորացավ ու ընդարձակվեց հաջորդ ժողովածուների մեջ: Այդ ու հետագա տարիների Սփյուռք ամբողջ կայրյանը զգացող մտավորականի հոգու պատկերն է Եղիանի պոեզիան, այդ մտավորական անհատն է ևս նարական հերոսը, որի կենսագրությունը սկսվում է 1914-ից ու շատանակվում է այնքան, որքան Սփյուռքի պատմությունն է: Ես 1915-ին մեկ տարեկան էր և ամսորի հանապառենի մօր գրկին էր: Հետո՝ օտար սպեր: ՅՍ-ական բվտիաններին լույս տեսած նրա առաջին երգերի մասին ես այն նակոտագիրը ունեցող մեկ ուրիշ բանաստեղծ՝ Վանն-Վանյանը երջտ է նկատում, քե այդ երգերը սերգերն ևն սերնդի մը, որ իր հայրենիքեն կը երջե այնքան բան, որքան մարդը մանկության իր օրոքոցեն, բայց որ կը պտուղնն անոր շարշարագին երազը՝ կյանքի այնքան բիրտ ու անհրապույր հետապնդումներու նամփուն վրա, իր մերժված գոյություն հետ»:

Մանկության օրոքոցից հիշողություններ ըստանում, բայց երեկ քե հագու և առյան զգացողությամբ է վերասլուծում այն օրերը, մանկական աշխուրհի մեջ անգիտօրեն դաշված հայրենական տան ու վայրերի պատկերները, հեղևված տների և ակտուր քաշվող մարդկանց ախուր աշխուր: Իսկ պատանի հասակում կրած ընտանեկան կյանքի դժվարությունները նա հուստատապես պիտի հիշեր ու հագրին վերասլուծում ամբողջ կյանքում: Օրեր, որ երբեք չեն մոռացվում:

«Հացի և երդիքի շափ լույսի» համար սփյուռքահայի մահառումը Սփյուռքի գոյության յոթ տասնամյակների ընթացքում հայկական շեղավ, մերթսյն ուղեկցվեց անորոշ անտարբերությամբ, մերթ հուսալիությամբ, մերթ խանդավառությամբ, բայց միշտ հայտնվում ու հավաստվում՝ կապված ինչպես տվյալ երկրի բաղաճական կացության, այնպես էլ հայրենիքի՝ հորհրդային Հայաստանի՝ սփյուռքահայության նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ: Իրականության ու սփյուռքահայի հագրբանության այդ փոփոխություններով է պայմանավորվում նաև Սփյուռքի ճշմարիտ գրականության ընթացքը: Թե երբ իրավ Մուշեղ Եղիանը մեկն է այդ գրականության տարանդավոր ներկայացուցիչներից, ապա նրա պոեզիան պիտի դառնա այդ

«լինակներէն ու տրամադրութիւններէն առաժ հայտերու ու խոսքերու» «մակ-
քնրացոյցյան ու տեղատվայցյան» արտացոլումը, նրա պանդխտայի բնա-
բանական հերոսը պիտի ունենար հագեցեալ այդ էլիկումները:

Իայց նախ Լեկու խոսք Մուշեղ Իշխանի պոետիկայի մի կարևոր ստան-
ճահատկոյցյան մասին, բանաստեղծական շարժումը խորհելու, բանաս-
տեղծական շարժի մեջ ներքին ամբար միասնութեան ու ամբողջականու-
թեան հասնելու ձգտումի մասին: Շարունակելով դարասկզբի հայ
պոետիկայի նշանավոր դեմքերի՝ Իսահակյանի, Տերչանի, Վարուժանի, Սիւ-
մաներոյի, Զաւենցիի՝ բանաստեղծական շարժերի տեսչման ավանդները («Ա-
զագյազի մահիներ», «Մքնշաղի անուրջներ», «Հացին երգը», «Միածան» և
այլն), Մուշեղ Իշխանը իր գրեթէ բոլոր ժողովածուները հրատարակեց կտր
շարժերի սիստեմով՝ կենտրոնանալով գլխաղիւր գաղափարի ու զգացումի
շուրջ, բնութեան տվյալ շարժին, զբնին բնութի խորագրեր՝ «Տուներու Լե-
զը», «Կրակը», «Կյանք ու Լեզու», «Ողբոյն Բեզ, կյանք», «Տարասպան»
և այլն: Այդ խորագրերը գրեթէ Լուսինայի բնդհանրացումներն են, յուր-
օրինակ խորհրդանիշներ, որոնք միածամանակ կապվում են իբար՝ ամ-
բողջացնելով բանաստեղծի բնատրական հերոսի կերպարը:

Նկատենք, որ «Տուներու Լեզու» շարժը կազմելիս ճեղհակը կենտրո-
նանալով «տուն» խոսքի շուրջը, զբնից դուրս է բողբի այդ շրջանում գրված
շատ բանաստեղծութիւններ, որոնք հետո կազմեցին «Կրակը» ժողովա-
ծուն: Կամ՝ «Ողբոյն Բեզ, կյանք» գիրքը լուս բնծայելիս զուրս է բողբի
այդ շրջանում գրված տարաբնույթ բանաստեղծութիւնները, որոնք հետո
խմբավորվել են ուրիշ շարժերում՝ «Ռակն աշուն» գրքում:

Ենչպէս ասացինք, յուրաքանչյուր գրքի վերնագիր մի յուրօրինակ խոր-
հրդանիշ է: Առաջին գրքում այդ խորհրդանիշը Տուն է, հայտենի հողի
վրա կանդուն հայրենական տունը: Այդ խորհրդանիշը ներառում է բանաս-
տեղծի զգացումները կոբցում մանկութեան, հարազատ օջախի, խլված հայ-
ւենի ափերի, տարաղիւր հայի հոգու տագնապների մասին: Յտար Բազա-
րում ապրող բանաստեղծը, խորհում է պողոտաների վրա բարձրացած
բազմահարկ տների առջև կանգնած, գիտե, որ ամեն յուսամտաից այն
կողմ բնտանական շերտութեան կա: Աշխարհից ու Տեր-Աստուծոց բանաս-
տեղծը ուրիշ պահանջ չունի, Բան՝ վերադառնալ հայրենի տուն, իր թշնա-
մի՞ն անգամ բող ուրիշի դասը շինի: Հայ մամիկի բեւանով աւիտ՝
այդ բանաստեղծի Լեզուն է՝

*Մեկող մանուկն առջի հեղ տեսնե տնակն հայրական
նո՞ ծերունին իր տան մեջ փակե աչքերն հովիտյան:*

Քաղմագան են տան տեսիլի շուրջ ծավարիւղ ՚բա խոսքեր, որ մերք
իւր շուրջը՝ օտար հողի վրա բարձրացող տներ անմիջական ներշնչանք
ունեն, մերք՝ մանկութեան հետափոր տան տեսիլի պայծառացումը, մերք՝
հոր Հայաստանի Լեզու՝ «Հայաստանի բանվորներու, աշխատավորներու»
ձեռներով վերաշինվող երկրի սլատկերով:

Հայրենի հողի վրա բարձրացող շենքերի տեսիլները շուրջագրվում են

օտար հողի վրա, իր շուրջը բարձրացող տների կենդանի պտուկերներին, ծնվում են հակասական զգացումներ, ավառսանկի, հպարտությամբ, երազի ու հավատի: Մի պահ մտանալով, քե ով և ուր է ինձը, վերագած, մարդկացած, վայելում է արարման, կառուցումի հրեմվանքը. «կառուցման տան և, աշխատանքի Լուսին, նորահրաշ հարություն», «կ'երգեն մտերև մեծագուր», և օրեր կբարձրանա շենքը, հիմքի մեջ՝ «բուրխի, հանկար ու ուկի»: Հեռապատկերի վրա՝ շենք շենք է, լայն լուսամտաներ ու «անուշ սենյակներ», բնառնկան Լեզանկություն: Ու մի պահ բանաստեղծին կարող է քվայ, քե նենց ինձն և այդ շենքը կառուցողը և անպարտադիր է կառուցողի նրա հպարտությունն ու երանությունը: Սա տարագիր մարդու Երազների երազն է, որին սակայն ցավալիտեն հաջորդում է իրականության դաժան անպարտությունը. որտե՞ղ է ինձը, օ՞ր է իր հողը, ինչ է անում ինձը: Բայց այնուհետև՝ Հայաստանում, Հայաստանի բանվորները կառուցում են նենց այն տունը, որ պիտի հայ մանկան նովոյությունով լցվի, և կառուցված ամեն մեկ տուն «երգ է սլայծառ, մեկ-մեկ անհեղ հաղթանակ ներված խորհիսն վեմ աշխարհին վայրենի», ամեն մեկ տուն մի հար է ավելացնում «անվերջ շինվող ու դարերով սկսած հայուն լուսեղ մեծ երազին ապագա»: Նրանքի ու սղույնի խոսքը, որ բանաստեղծը ուղղում է Հայաստանի բանվորներին, նպարտության և երանության ու նաև ցավի զգացումով է շարժված. որովհետև նկատ է ինձը.

*Եվ կ'արտատի ինչ իմ հողիս դամարեն՝
 Այսպես ստոր, այսպես անմասն ու հեռուն:*

Հավասար այս պտուկերները, որնան էլ պիտուր շեշտերով հեշեն, այնուամենայնիվ, նկատվուր տան տեխնիկ մարմնավորում է որպես երազ ու հավատ: Պատուր դոներին, «բախիժի սե ժամերին», «հոցնած ու հուսահատ» քափառող բանաստեղծի համար «վաղեմի», «կորուստյալ», «վառապանծ», «ունափառ» հայրենի տունը բերում է նրա սրտի համար «խիսնդ ու լույս», «խրոստանեմ», «կրանք և հավատ»: Հավատ, քե մի օր պիտի կրկին իր հայրենի հողին կերտի իր նոր տունը, որպես հուշարձան անբաղ ու կոտրված մեռելներու, պիտի նախն կյանքով, Երգով ու ծիծաղով լցվի այդ տունը՝ և այդ տան առջևով անցնող մարդիկ իրար պիտի ասեն մարտալի.

*— Այս է ա՛նա տունը մեր բանաստեղծին, որ երգեց
 Տուներու երգն ու երկա՛ր տառապեցած տարագիր...*

Բանաստեղծի անմասն երազն է սա ու հավատը ու պարահական չէ, որ սա գրի վերջին բանաստեղծությունն է՝ «Վաղվան տունը» խորագրով: Այս գրքում բանաստեղծը բացարձակապես է Տան սերը բոլոր սերերի մեջ:

*Հիմա ես դիտեմ, որ փուշ է ամեն սեջ
 Կեղծիքով տառապող սրտերուն մեջ մարդկանց,
 Միայն դուն կյանքին դեմ կը մնա՝ գերիվեր.
 Ով տան սեր, մեծ նրալքը նշմարիտ է անանց*

Եվ հայրենի տնից հեռու հայրենի տան կարօտով մխացող բանաստեղծը, մինչև իր երազի իրականացումը, ստեղծում է իր յուրօրինակ խորհրդանիշ տունը, որ հայոց լեզուն է, և բանաձևեցնում, թե «հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս շուր ծագեցուն», հավատալիք ու շեմեհանդ սիրով «մտնում է այդ տունը»:

Սփյուռֆահայ գրականության գրեթե բոլոր լավագույն նրկերը (և ոչ միայն) իրենց հարցադրման հիմքում ունեն սփյուռֆահայության զայտուկան տազնապր, ուծացման դեմ պայքարի մտահոգությունն ու միջոցների փնտրտալը: Նրե «Տուներուն երգը» գրում հայրենի տան խորհրդանիշով իշխանը տարագիր հայությանը, որպես գոյատևումի պայքարի միջոց ու ուղայման, առաջադրում է հայրենի տան տեսիլով չցվելու, նրա կարօտը սրտում մշտավառ պահելու զգացումը, ապա երկրորդ գրքում («Կրակը») այդ գաղափարը հարստանում է մի ուրիշ պայմանով, որ հագու կրակն է: Կրակն է դառնում այդ գրքի հիմնական խորհրդանիշը: Կրակը, որպես տան օջախի կենսաբարթության խորհրդանիշը: Կրակը որպես շեմագուցիչ օտար սառնության մեջ, կրակը, որպես բարբոսիչ անորոշ հուսալիության պահերին, կրակը, որպես շահ լուսավարելու համար կորցրածը վերագտնելու հանապարհը, կրակը սիրո ու կյանքի, հույսի, հավատի ու մահաժաման: Եվ այդ ամենը՝ ապրված, անմիջական ծագումների երանգով հղացած երգերի մեջ, կյանքի ու մահվան, սիրո ու մարդու, հողի ու կառույթի, բնության ու ցնորենների երգեր, ուր և՛ մենավոր հագու հուսանաա կանչ կա, և՛ տխուր մոռման, և՛ մահազգացում, և՛ կյանքի, ապրելու տենը: Գրի-խավորապես տխուր Լեզեր Էն՝ ծնված ապրիլյան անձրևի խոնից, սեռագրեստ հայ մամիկների մափն մտածումներից, հոգին պարուրող անորոշ բախիծից, անարշարույս գիշերներից, տարագիր մարդու հայրենաբարդությունից: Ու այս բոլոր խոնների ու նուզումների խորքում նկատելի ու զգալի է հենց այն կրակը, որ կենդանի ու բորբոս է պահում կյանքի սերը: Երկմտությունն ու բախիծը հանախ Էն հուսալիության հասցնում «Կրակը» գրքի ընտանական հերոսին, և իր հոգեկան վիճակը պատկերող շանտաուկ-ծայրյունը հեղինակը խորագրում է «Կենդանի մահացում»:

*Քո՛ւն, միայն քուն, անարև ու սնկերադ,
Սրբին անծայր մշուշի սկս կ'իջնեն մրաս,
Մեռան իմ շուրջ բոլոր ձայներն ալ ա՛ն,
Նա մտածելն իսկ մոռցա...*

Քվում է, թե չկա «ոչ մեկ տենդանե, ոչ մեկ ժպտո», անգամ կենսական «բախիծ», սակայն մահվան ցանկությունը չէ հաջողող զգացումը, այլ՝ «ո՛վ մահ, ո՛վ մահ, կյա՛նե՛ աուր ինձ» և համատարած ծանձրույթից, «բշվառ, աղխառ ու տրտում» կյանքից նա «զգո՛ւջ՝ օրուի տեղ» հանձնում է իրեն «կյանքի դափ ու բմբուկին»:

Անորոշության մեջ ապրող հերոսը իրեն նմանեցնում է կայարանում «երչանկության և բախտի նկայրնրացին» սպասող մարդու նկա, որը մըջ-

ասպէս սպասում է, քայց իր գնացքը չի գալիս: Ու խորհում է հոր՝ գուցե զնացքը եկած ու անցած, իսկ ինքը շտեմով, գուցե կգա շատ ուշ, երբ ինքը ծեր կլինի կամ մեռած, խորհում է և ՍՊԱՍՆԻՄ («Սպասում»):

Բանաստեղծի «երակներու մեջ» սլահված կրակը այս գրքում Լեքեմն անկայծում է հայրենական ցավի մղումներից: («Դուք, մամիկներ սևագլուստ», «Լուղանդի գիշեր», «Գարեհան անձրևին»):

«Տուններու Լեզր» և «Երակ» գրքերից հետո Մուշեղ Էշխանը կազմեց և մեկ ժողովումու, գրված 1939—41 թթ. բանաստեղծություններից, «Կյանք ու Երագ» խորագրով: Իրականության ու երագի հակադրության (թե՞ հայտնեցման) սկզբունքով ստեղծված այս ժողովածուն, սակայն հրատարակության արվեց ավելի ուշ (1949 թ.), ևանի որ բանաստեղծի հոր հազարամյա մեղքերը կերպավորվեցին բնարական մի ծավալուն պաննի տեսքով, որ կոչեց «Հայաստան» և յուրս բեմայեց 1946 թ.: Պակմը ծնվեց պատերազմի վերջին տարում, որ մեծ հայտերի ու բեկ անորոշ, քայց հեռանկարների տարի էր: Պաշտոնական ու ոչ պաշտոնական, կիսատ-պատ լուրերը հայս էին ներշնչում, բե Արեմտյան Հայաստանը Խորհրդային սահմանների մեջ սփռի հերածի: Հույսի ու խաբկանքի, ոգևորության ու հիասթափության, սարսափության ու վերադարձի, ճին ու հոր հայրենիքի մասին սփյուռֆա-Լայության մեջ ծնված հակասական խոհերի ծնունդ եղավ «Հայաստան» ստեղծը: Հայաստանը, որին հղված ձոն է Իշխանի պաննը, մենախոսություն, լ.՝ խոստովանանք՝ ստղված հրան, որոշակի չէ, հինն է թե՞ հորը, անց-յալինն է, թե՞ հեկայիեր, բե բնդհանրական Հայաստան է, հայրենիքի խոր-հրդանիշ, ոպի: Պեհե ո՛ մեկն է, և՛ մյուսը: Քայց մի հարցադրում հըս-տան է, պաննը տարագիր մարդու հայրենիքի հետ հոգեկան կապվածության մասին է, մարդու և հայրենի հողի միասնության խորհուրդն է, անհայրենիք մարդու անարմատ գոյության և «ծիրանի ծառ հաստարմատ» Հայաս-տանի նովապրությունը: Ավ՝ շմառնն ինկած գոս տեհե՝ տարագրի գոյու-բյանը արդարացված է սոսկ հոգեկան կապերով: Անցյալ ու հոր հայրենիքի անսխիները մերք մշտնվում են ու մերք պայծառանում, մշտնի մեջ Երևացողը մերք զրբուն ոպի էք, մերք՝ «խորհրմատ գոյություն», մերք՝ «խեկարայր մագաղսար», մերք՝ «ծփուն պատկեր», մերք՝ «հանդերձյալի», մերք՝ «ույս կյանքի» հայրենիք: Այսպես, անորոշ ու երկդիմի: Քայց Երք սնցնում է մշտնը, պայծառանում են տեսիլները, և շոշափեյի է դառնում Լեկա ու իրական, գոյատևող ու վերբնձյաղվող Հայաստանը: Նրան էլ Երկում է բանաստեղծը իր հավատի խոսքը.

Հայաստան,

Միակ հերիաթն իրական,

Կենսածայիտ միակ Երանն անթառամ,

Գուն կը նետես օրերուս մերկ պառտառին

Շարժանկարդ փարթամ

Ռակիդրվագ ամպերուն պես այգային:

Ճակատադրի մրրիկներեն հողմակոս

Սիրանի ծառ հաստարմատ,

Որուն կստրած ճյուղերուն տեղ վերախոց
Նոր քնձյուղներ կը բարձրանան անբնդհատ...

...Մոխիրներին հառնող իմ նոր Հայրենիք
Գեղակերտ շեն ու սատան,
Ստեղծարար բազուկներու քեղուն ճիգ,
Մուրճի նվագ, բահի գրոհ հաղթական,
Հանքերու գանձ, ջրանցքի ցանց հարածուն
Ռե ծխաշունչ գործատուն,
Ներշնչումի անհունորեն խոր երկինք,
Կույսի քանդակ ու մատյան
Եվ իր հողին նվաճումով երջանիկ
Սերունդի վառ ապագան...

«Կյանք ու Երազ» ժողովածուում առաջադիւր է գտնում Երազի խոր-
հրդանիշը, որ լրացնելու է գալիս հայրենի առէ՛ր և կ'ը ա կ խոսերգանի-
շերին: Հագսերով ու հարգումներով լեցուն կյանքի պատկերներից ծնված
նշմարիտ խոսերը, որ կան այս գրքի կշեռում, նեղիմունքին լեւազում են
գոչապահպանման ու հայապահպանման մեկ միջոց. առանց հույսի, առանց
Երազի ո՛չ կյանք կա և ո՛չ էլ՝ պայքար: Երև հողին երազագուրկ է, ուրեւն
քեարափ է և կործանված:

Իրում հակադրված շեն կյանքն ու Երազը: Ավելին, դրանք պայմա-
հավորվում են իրարով. բանաստեղծի կարծիքով երազն է, որ մարդուն
մղում է դեպի կյանքի գեղեցկությունների զգացողություն. ու հենց հանուն
Երազի իրականացման պիտի սիրել կյանքը, բնությունը, լույսը:

Եվ քնական էր Երևի, որ հաջորդ գրքի խորագիրը Լզավ՝ «Ողջույն Ռեզ,
կյանք»: 1958-ին լույս տեսած այս ժողովածուն, անշուշտ, Մերձավոր Արե-
ւելիի հայ գաղթօջախների ծաղկման շրջանի տրամադրությունների ազդակն
ունեւ, նաև Հայաստան—Սփյուռք ծավալվող կապերի նեւածկարի հույսը:
Քայց նաև բանաստեղծի նոր հայացքն էր մարդուն ու աշխարհին, ազգա-
յին ցավից՝ մարդու ցավին անցումը: Հիշենք, որ շաբլի նախերգում, Խա-
հակյանի հայտնի պոեմի նախերգի նմանությամբ, Լիխանը ներկայացնում
է իրեն որպէս մի բանաստեղծ, որ «տասնյակ տարիներ ապրեցե՞վ պան-
դախտ, օտար ու ցուրտ երկինքներու տակ... Եվ օրավնետե շունե՞ր գանձ
ու հարստություն, ան իր սիրտը քաժանեց մաս առ մաս հանուր մարդոց
և աշխարհին, սղջույնի մէջ եղբայրական»:

«Կյանքի, բնության, սիրտ, աշխատանքի, արաբումի օրհններգություն-
փառաբանություն են այս Երզնէր, կյանքին ու հանուր մարդոց ուղղված
ողջույնի խոսքեր.

— Ողջույն քեզ, կյանք, դու շքեղ փառք, դուն հաղթանակ,
Ողջույն ցավիդ, հատաշնորհուդ ու խաղաղիդ,
Ողջույն ծափիդ ու ծիծաղիդ ու լույսերուդ...
Ինչպես որ կաս՝ մերթ արտասուք ու մերթ ծայրա...

Հետագա տարիներին Մուշեղ Լիխանը իր ոչ բն աչս, այլ նախորդ դրե-

Քերի տանայնորյամբ երգեց կյանքի հենց այդ բազմազանությամբ՝ ծի-
ծաղն ու լույսը, առաաստին ու ծղիտը, հրեվանքն ու հառաչը: Փորձեց
հասկանալ «աարօրինակ, աարօրինակ մարդ-առարածին», աշխարհի դր-
վածքը, անմարդկային-մարդկային օրենքներն ու արարքները, իր առաձեռ-
քողքի մեջ դրսևորելով մարդկային համար ունեցած իր ցավն ու սերը,
իր հազումն ու զայրույթը:

Յնչ երգերը և հառկապես նրանք, որ հավաքվեցին «Տառապանք» խ-
ռաֆրի տակ, 1968-ին, տառապող մարդու կամ մարդկային տառապանքի
երգեր լին, մարդկային ծանր հակառաֆերի փոֆիկ պատմություններից
ծնված ծանր խոհեր՝ հեղինակի առաչակի վերաբերմանով:

Սիրտս կ'արյունի աշխարհի ցավով...

Աշխարհի ցավով հիվանդ է հոգիս...

Շայ բանաստեղծը տազնապած է աշխարհի հակառաֆրով, մարդու հա-
կասաֆրով, մարդկային տառապանքները, ինչպես Ավ. Խահակյանն էր
ասում, գայիս իր սիրտն են լցվում: Բանաստեղծը խոստովանում է, բե չի
կարող իր գլուխը հանգիստ դնել բարձին, քանի որ շուրջը լին է «հա-
ռաչ ու կակիծով», քանի որ «սուրի ու սովի» ավար են դառնում լույս
մանուկներ:

Ժողովածուի քսյօր բանաստեղծությունները մարդկային տառապանքի
մի-մի դիտարկումներ են, կամ բանաստեղծի հօգեկան տառապանք՝ ծըն-
ված կյանքի քացասական ԼԼԼայրների դիտարկումներից: Կյանքի հար-
վածները կրող մարդկային հակառաֆերի դառն պատմություններից հյուս-
ված մի շարք է «Տառապանք»: Այսպես, մայրը որդու գերեզմանաբլրին
լեկում՝ ոչ բե ողբ է առում, այլ օրօր («Յրօր»), մեկավոր խուցի մեջ
ծեր մամիկը մենակ սպասում է մանկան և ամեն օր նրա շուրթերին աղսբ
է, որ հեկվում գոնկող (մօրը լիած) գավակը ԼԼԼանիկ լինի («Մամիկը»),
փոֆիկ մանչուկի գառնակը մօրքում են, և արյան շիրերի միջով մանկան
աշխարհ դաշտ ու ծաղիկ և աշխարհն ամբողջ կարմիր ԼԼԼ տԼԼԼան («Գառ-
նուկի խոռոված»), վերին հարկի պատի վրայից բնկնում-մեռնում է բան-
վօրը, և ի՞նչ խոսեկօով պիտի խաքեն նրա որբացած մանկանը («Բանկօ-
րք»), օտար հաղաֆում մահամերձ է պանդուխտը և մահի մոտ ոչ մի
հարաֆատ չունի վերջին հրաժեշտի համար («Կլնօր պանդուխտ»):

Բանաստեղծը ցավով ու ԼԼԼիծանեով է խոռում մարդկային հոռի բար-
ների՝ կողօպօտի ու քայանի, խաքեօրյան ու կեղծիքի, շահամոլորյան
ու բեչաֆաղցուրյան մասին («Կը կաշվինք մարդ»), բարձրացնում է մար-
դու ֆաղաֆաղիական ակտիվորյան, մարդու և հողի նկատմամբ սիրո ու
դաստախանատվորյան, մարդուն օգնելու, սատար կանգնելու հարցերը:
Քարի, ստեղծող, սպեղանի, սուրբ ձեռքերի գովերգն է անում, քայց ավա՞ղ,
այնեմա՞ն շատ է «արցունքը մարդոց» և «ցավը կյանքին՝ վիրխարի հնոց»:

Եվ ցավը երկնառաֆ չէ, այլ հեռուանք մարդկային շուրթյան, ԼԼԼ ու
ԼԼԼիանձի, բեչասիրտորյան ու շահամոլորյան, վայրենի բնաղնԼԼԼի: Մարդը
հոշստում է իր նմանին: Եթե մի օր հանգիպ՝ օտողարնակի հետ, ինչ-
պե՞ս պիտի բացատրի, բե սվ է ինքը՝ երկօրնակը, խաքեում է բանաս-

տեղծը: Ինչպե՞ս ասի, թե ովքեր են իրենք, որ կաշվում են Մ ա Ր Պ: Մարդ-
որ կերտում է տուն ու տանար, ստեղծում հաց ու գինի, բայց սրպեսզի
վայելի սեզանը միշտ շքեղ ու առատ լինի՝ «Կը կալուպունեն մենք իբար,
կ'ավերենք գյուղ ու քաղաք»: Մարդ, որ շատ է սիրում իր նմանին, ունի
և՛ համբույր, սաղմուս ու սիրերգ, արցունք ու ժպիտ, և՛ «կ'աղոթենք հա-
նապազ խաղաղության եղբայրության կարտավ»,

*Բայց սրպեսզի մեր կյանքն ըլլա ապահով՝
Բաղձաշնորհ սա ձեռքերով դյուրարեկ
Մենք կը սպանենք մեկզմեկ,
Մենք կը մորթենք պղտիկ ու մեծ անխնա,
Մինչև մեր շուրջ արյունը տաք ծովանա,
Մինչև մեր սիրտն հովանա,
Բայց դեմքը մեր միշտ կը մնա անաղարտ
Եվ կը կոչվինք մենք հոն Մ ա Ր Պ...*

Ընդդեմ մարդկային շարուքան՝ քանաստեղծը երբեմն էլ փորձում է
քայլել «տարօրինակ մարդ արարածի» ստեղծվածը, կրկին անգամ հիշեց-
նել հեռան մարդու կյանքի կարեւորությունը, մահվան գոյությունը («Ցա-
վիդ խորեն», «Նույնն է համբան», «Տապանագիր»): Հիշեցնել մարդու կաշ-
ման մասին, խղի ու կարեկցանքի, սիրո ու նվիրումի մասին: Հիշեցնել,
թե մարդկային կարեւոր կյանքը իմաստավորվում է մարդկային այնպիսի
հատկանիշներով, ինչպիսիք են՝ հավատը, սպասումը, հույսը, խիղճը, սերն
ու կարոտը, պայխարը, առաւպանքի ու ցավի հաղթահարումը, կյանքի փա-
ռաբանումը:

«Տառապանք տալ ամբողջ մարդկության» այնպես տառապանքով զգա-
ցող քանաստեղծը բնականաբար սլաքի ապրելու նաև ազգային տառապան-
քը, տառազիր հաշի տառապանքը: Եվ հեռա վնասկան հերոսի կարչան-
մեջ բնդգծվեց իր տառազիր ժողովրդի, իր լեզվի, իր հայրենիքի նակա-
տագրի նկատմամբ ունեցած տազնապն ու հուզումը: «Ռսկի աշուն» գրքի
(1963) ներ շարեւրում («Ջեռն ձեռքի», «Հասկաւաղ»), իր զավակին նը-
վիրված Լեզերում, թե իր կյանքի «աշնանային» խոհերի մեջ այդ տազ-
նապն ու հուզումը շարունակվում է: Իր զավակի հետ գրույցի պահին այդ
տազնապը դառնում է նաև պատգամ.

*Խոսե՛, տղաս, խոսե՛ անվերջ մեր լեզուն,
Այսպես հպարտ և երկչուղով սրբազան,
Նքե հանկարծ գիտ շտանես օր մը դուն,
Եվ մինչև իսկ շուրջդ ո՛չ ոք խոսի զայն...*

Օրը քնկվում է դեռյի մայրամուտ, մշուշվում են անցյալի հուշերը, բաճե-
րանում է կարոտախոտը հայրենական վայրերի, տենչանքները կենտրո-
նանում են և Հայաստանի խոհերդանիշը՝ Արարատը, դառնում է վերջին
բաղձանքը.

*Ծա՛ շառավիղ Հայկազյանց, հայու ժպիտ, հայու լաց,
Մասյաց որդի հարազատ՝ ես Մասիսը շտեսա.*

*Իր կարուստով տոշորուն և իր կանչով արթնցած
Սու Մասիսը շտեխա...*

*...Ինչպե՞ս աշխերս փակեմ, երբ որ ով մահ, զիս կանչես,
Սու Մասիսը շտեխա...*

Այդ խոսքերը ձգվում են ասիների հետ, առ այսօր, և եթե վկայարբ-
րենք 1956-ին լայն տեսած «Արևամար» ժողովածուն, առ զհետևյալս են
մեծավ մասամբ ՑՍ-ական բվականների գրված բանաստեղծությունները,
ապա գործյալ կյանքի ու մահվան խոսքերից առաջ, որպես առանձին բա-
ժին, գտնում ենք Սփյուռքի տաղնապետներից ծնված ժանր ու արտում խո-
սքեր:

Սփյուռքի իրողությունը, («Երկրի երեսին գնա ու գնա, Սփյուռքը վկա,
Հայ կա չկա») հայոց ֆորավանների բաժանումները («Մտոցած երգիք ու
ձերկիք՝ Անանկ կ'երթա՛ն ու կ'երթա՛ն») տաղնապետ են ծնում ու հարցա-
կաններ («բայց մինչև ե՛րբ, մինչև ո՛ւր...») և սքափեցնող կոչեր («Հայ-
րենեակից, ո՛ւր կերթա...»): Բանաստեղծն իրեն զգում է որպես տարահա-
յած, ջանուցիք այդ գոյություն ունեցող:

«Մարմինես պոկված ամեն մեկ անդամ

Աշխարհն աշխարհ հղավ ցանուցիք...

...Իմ հոգիս լուսի արդ կայք ու երգիք

Հայոց Սփյուռքի անծայր տարածքին»:

Եվ հայոց տառապանքի ու կորստյան բնորոշ պատկերների մի շարք
հուրը դիտարկումներով («Սեղանին շուրջ կաղանդի», «Հայ եմ ես», «Եսեմ
ոյուն», «Հարվոցը հայ ենչեցչալին» և այլն) ամբողջացնում է Երևայրի
ու զբերգականությունը: Բայց հավատի ու հույսի շեշտերը Երբեք չի մո-
տանում կնկլ բանաստեղծը, փրկության միակ էլիք համարելով հոգու դի-
մարտը շունը, հայրենաբաղձությունը, վերադարձի ու գտնումի հավատը:

«Կյանք ու Երազ» ժողովածուի բաժիններից մեկի համար Իշխանը բնա-
բան է բնարել իր մի բանաստեղծության տողը՝ «Կյանքն իր երազ մը
էղակ, ինչպես երազն՝ իրեն կյանք»: Միանգամայն հշմարիտ բնարագու-
րյունն է իր պոեզիայի: Եվ ոչ միայն պոեզիայի: Իրական, նշտապատում
կյանքն է արքմնի երազը:

Շուրջը դաժան, տառապանքներով լի կյանքն է, որ արձագանք է գրա-
նում երազասե բանաստեղծի հոգում: Շուրջը «մահապլյուն քնդանթե
կը գտան», իսկ ինքը Երազում է ինչպես մի լացող մանուկ կամ աղաթող
մի խռովահույզ արեղա: Անկեղծ, բնական, մաքուր ու սուրբ: Ու Երազը
չրողեց, որ կյանքի լողին, (որքան էլ, որ շատ է), դառնացնի հոգին,
նստաբեկի իրեն, մոայլի իր երգի կենսականությունը:

Կյանքի ու Երազի հակադրության ու միասնության բանաստեղծական
լնկալումը զեղազիտական սկզբունք ու դիտակետ է Իշխանի համար ոչ
միայն պոեզիայում: Իր արձակ ու դրամատիկական երկերում հույնպես
ժշխունց քանաստեղծ է, երազասե, ոտմանտիկ, եթե անգամ իրական կյան-

քի բանձր անսխառական պատկերներն է գծում: Դարձյալ իրականությունը՝ հակադրված երազող հոգիներին: Դարձյալ գեղեցիկի, իդեալի երազը, որ կենսական լիցքեր է հաղորդում մարդուն՝ քարծառնալու արտեանկանից, որ կամ դաժան է կամ զորշ ու միապաղաղ: Կենսաբաղձություն, հավատի ու սպասման լիցքեր է հաղորդում: Ասեմք, օրինակ «Սպասում սիոս» վիպակը կամ «Կիլիկիո արևան» բառերգությունը:

Բայց նախ հիշենք, որ արձակագիր ու դրամատուրգ Իշխանը գրել է ոչ քիչ արժեքավոր ստեղծագործություններ:

Իշխանի արձակը («Հացի և լույսի համար», «Հացի և սիրո համար», «Մնաց բարով, մանկություն», «Սպասում» վեպերն ու վիպակները) գլխավորապես ստեղծվել են կենսագրական հիմքի վրա: Հեղինակը ճիմնակա՛նում իր մանկության ու պատանեկության տարիների հուշերը, տպավորություններն է, փորձում կերպավորել: Բայց դա հուշագրություն չէ և ոչ էլ կենսագրական վեպ, պարզապես նրա ներսը շատ բան ունի նեղիմակի կենսագրությունից, նրա ներսները պատանեկության տարիների իր հարգատևներն ու ծանոթներն են, անշուշտ, գեղարվեստական մշակմամբ: Քե օրհանով են իրական դեպքերը հաճելիվել հրեակայությամբ ստեղծածով, այս դեպքում էական չէ: Մենք պարտավոր ենք դրանք ընթացնել որպես գեղարվեստական կերտվածք, ընդհանրացում՝ վերանալով կենսագրական նշարտություններից: Դրանցից մեկը միայն («Մնաց բարով, մանկություն») հեղինակը անվանել է հուշագրական վեպ, և մենք իրավունք ունենք այն նկատի առնել նաև որպես կենսագրություն: Սակայն այս դեպքում նաև էականը կենսագրականը չէ, այլ ժամանակի ու մարդկանց կերպավորման խնդիրը, այսինքն նրա դիտարկումը որպես վեպ, կյանքի մի կտոր, գեղարվեստական ու գաղափարական մտաճղացում ու կատարում: Այս գործերը ըստ էության շարունակում են 30-ական թթ. մեզանում սկզբնավորված կենսագրական վեպի ավանդույթը (Գ. Մահարի, Զ. Սասյան, Վ. Քոթովենց, Ստ. Զուրյան), որ հետևողներ ունեցավ նաև 50—60-ական թվականներին (Սպավերի, Վ. Անանյան, Մ. Խերանյան, Ա. Մառուկյան և ուրիշներ) և սրունց մեջ Իշխանը առաջիններից էր («Հացի և լույսի համար» գրել է 1943—50 թթ.): Այդ վեպերի մեջ նա մերք հետևում է մահարիտիան՝ «գուտ կենսագրական» սկզբունքին, մերք՝ գորյանական «ոչ միայն կենսագրական» սկզբունքին:

Հայ մառդու դաժան նակատագրի, մանկության ու պատանեկության ծանր ու ողբերգական օրերի, ախարի ու տարագրության, բափառումների, հացի և լույսի՝ այսինքն ապրուստի և գիտության համար համաժամանակյա դաժան կռվի մեջ հայ մառդու ամենօրյա մահառումների, ֆիզիկական, հոգևոր ու հայեցի գոյատևման մասին են Իշխանի այս վեպերը: Կտուրածից հողաթրած մի հայ ընտանիքի ու նրա մահուկ, ապա պատանի գավակի կյանքի ծանր օրերի պատմությունը հեղինակը ընդհանրացնում է մի ողջ սերնդի համար, սերունդ, որի կյանքը եղավ դաժան պայմար, մշտադե հալածանքների շարան, բայց և հավատ ու սպասում: Այսպես, որ այս երեք վեպերը կազմելով միմյանց շարունակություն՝ լրացնում ու

ամբողջացնում են հերոսի՝ Սեդրակի կերպարը, մի կյանքի պատմություն, որ խորհարգներ ունի տալու բնօրհանը: «Միքե լավագույն պատմությունը, դո՛ւք լսե՛ք՝ վեպը, շուրաֆանչյուր անձի կյանքը շէ արդեն», — գրում է հեղինակը:

Ու էրե՛ վեպը, որևէ արձակ էրկ, երևակայությամբ կառուցված, բերողություն պատկեր, որևէ անձ, որևէ մարդ է կերպավորում արդեն այն գեղարվեստական ստեղծագործություն է, — մանավանդ, երբ գեղագծաբան աչքով է դիտված: Այս նկատառումով բերես Խշխանի գեղարվեստական վերահիշյալ արձակի կողմին պիտի արժեքավորել նաև նրա «Ըմ ուսուցիչները» գրքի, որի մեջ գետեղված յոթ բնութագրություն-հուշագրություններ են մեր նշանավոր մտավորականների (Հակոբ Օշական, Նիկողայոս Աղանց, Լևոն Շանթ, Նիկոլ Աղբալյան, Սիմոն Վրացյան, Կոստան Զառյան, Վահան Քեֆեյան) մասին, քանի որ հեղինակը կարողացել է առանձին պատմությունների, դեպքերի հուշագրությամբ կերպավորել այդ մարդկանց, ստեղծել նրանց ոչ թե (կամ ոչ միայն) գրողի, գործիչի, այլ (կամ այլև) մարդու կերպարը: Իշխանի՝ կերպավորելու կարողությունը մեզ տալիս է այդ հիմքը:

Կենսագրական հիմքի վրա շխարհված էրե՛ վիպակների մեջ («Սպասում սիրու», «Սպասում փառքի», «Սպասում քախտի»), որոնցից և՛ ծավալունը, և՛ առավել հաջողվածը առաջինն է, Խշխանը կրկին դրսևորում է վիպայնու (պատմելու) և կերպավորելու իր ածառանալի ձիւհերը: Կարծեմ, տեսանելի էրե՛ կերպարների շուրջ հյուսվում է կյանքի մի հետաքրքիր և ուսանելի պատմություն: Իշխանի պոետիայի բնութագրական հերոսի կարծանքը բնորոշ մեկ հատկանիշը՝ երազը և սպասումը, դառնում են կենսատեղական թիմա ու մտքով հաև այս գործում: Սպասումը ենթադրում է երազան, ենթադրում է հավատ, որով բնութագրվում է վիպակի հերոսը՝ Լևոնը, բայց կյանքում հաշվենկատ, շահի համար մղվող անվերջ պայքարի պայմաններում այդ և՛րը են հաղթող դառնում երազն ու սերը: Իդեալականի, գեղեցիկի, երազային կանխ մասին իր պատկերացումները իրականի շրջանակներում շխարհանալով տեղավորել՝ վիպակի հերոսը կորցնում է իր երջանկությունը՝ կյանքային, իրական սերը՝ Սոնային: Եր երազի աղքատի, իր անուշ սիրտ տեսիլը շի կաղապարվում Սոնայի գոչությամբ և անբավականության, ինչ-որ ուրիշ մի գոչության սպասումի նրա անունանելի զգացումները սրսալով, Սոնան, թեև մեծ տառապանքով, ինքն է հրաժարվում նրանից. ևս տալով նշանի մատանին:

Վիպակի հերոսը, զարմանալի և հետաքրքիր մի կուրյուն, ապրում է երազով: Երազ և սպասում: Եր երազած սիրտ սպասում, «Տակավին կը հաճառամ, բե պիտի գա ան՝ որ պիտի գա», — ասում է հերոսը վեպի վերջում: «Մինչև այսօր երազի խղցր ստոր ավելի նշմարիտ կը քվի ինձի, քան կյանքի իրականությունը... Ես դեռ կը սպասեմ...»:

Դաժան կամ գորշ իրականությունից դուրս գալու սլայմանք բերես երազն է, պատրանք, խորհում է Խշխանը իր բանաստեղծությունների մեջ, իր վեպերում, իր ըստերախաղերում, երբեմն նույնական մի դիպված, մի սյուժե մի՛ մանրից տեղավորվելով մյուսը: Այսպես, խանութի ցուցափեղկի մա-

Տեկնան գեղեցկուհուն սիրահարված հերոսի զգացումները շտեղծված լավ քանասանդուրքյան շրջանակում, ես ստեղծում է ես «Շուրջփողկին աղ- չիկը» քաներախաղը: Երազդի կնարական կերպարից ես անցնում է ար- ձանի ու դրամատուրգիական կերպարների կերտմանը, ամբողջացնելով կյանք և երազ հարստերության գեղագիտական իր քննարկումները:

Երազի գերզգայնությունը խենթություն է նախագուտն է, կամ ավելի ճիշտ՝ փրահանությունն ու նյութի կառչածների համար մեծ երազողները խեն- թեր են, քայց խենթերի նշմարությունն էլ երեկ յարավի է նշմարիտ, արվեստն այն երևակայելի, ցանկալի, գուցե անհար իրականությունն է: Պեղեցիկ ու բնորոշ օրինակը կանն է՝ «Կիլիկիա արևան» քաներախաղի գլխավոր հերոսը: Մինչ նրա եղբայր Վանանը կաշիկի գործում տուտա- կան նաշոգություններ ունի, ամուսնացել է, առօրյա կյանքը նրան իր մասն է փաշել, կանը երազդի ծայրահեղորեն արված իր զգացումներով, պատկերացնելով իրեն որպես իր նախորդների երկրի՝ Կիլիկիա արևա, մեռածարվում է եղբորը համագործակցելուց: Ընտանիքի անգամներին թե փաղոցի մազկանց նա ներկայացնում է որպես կան հոբնեհորդ՝ Արևա Կի- կիկիո: Ես իրեն պատկերացնում է նախնիների գանի վրա՝ իմաստուն ու իրազողաժեռ քաղալոր: Մարդիկ նրան խենթ են անվանում, ծիծաղում են նրա վրա, փորձում են հիվանդանոց տանել: Բայց այս «խենթի» խոսքերը մի՞թե ավելի խելոք չեն: Եվ երազողները, միայն կհասկանան նրան ու նրան մանուկները, որ դեռ կյանքի մամլիչով չեն անցել:

Երազը, որքան էլ անիրականալի թվա, պետք է հավատալ նրան ու մահավանդ ձգտել: Ու էթե հավատ ունեցար և ձգտում, չի կարող չիրա- կանանալ այն:

Դարևորը բազավորի գլխին է և ոչ թե քազը, առանց գլխի, քազը քանգարանի փոշիների մեջ է, ասում է կանը: Ու չի կարելի հաշտվել կա- տուսանների հետ, ու եթե արևա ես եզծի ու հիմա արևա շե, արևայավաշել ուղիտի պահես քեզ: Հավատա և արևա կ'ըլլաս, — ասում է կանը մի ման- ձան (իմա՝ նոր սերնդին) և նրան փոխանցվում է այդ հավատը: Եվ պիե- տի վերջում Արևային շրջապատում են նրա խենթ երազի համակիրները: ու շատերը նրանցից, արդեն ոչ թե ձեռք աննելու համար, այլ ներշնչված ու հավատով զոչում են «Կեցցե՛ Արևան, կեցցե՛ մեր արևան...»:

Եվ որքան մեծօրյա են հնչում կանի խոսքերը. «Փաղովուրդ հայաց, չավ է. որ եկաք և շրջապատեցիք ձեր Արևան, վանդի հնչած է մեր պատմության վնասկան ժամը... Եկեք ավելի մեծ թիվով, աստղերու շափ- շատ, հեղեղի պես անգուսպ... Եկեք և ձով դարձեք իմ շուրջ... Մինչև և՛րբ մեր հայրենի սուրբ հողերը պիտի մնան օտարի լուծին առկ: Մինչև և՛րբ մեր այգիներն ու պարտեզները ոտի կոխան պիտի դառնան քշնամի կրունկներու հերև... Մինչև և՛րբ զաղքական պիտի մնան, օտարներին ծառա, օտարին գերի: Թավ է, որքան քափառեցան հեռավոր ավերու վրա՝ անտուն ու անկայան: Հոն, յոսերեն անդին, ծովերեն անդին հիփրական հայրենիք մը ունին, որ մեզ կկանչի: Չե՛ք լսե՛ր ունոր ձայնը: Մի՞թե այդ- ֆան խուչ է ձեր հողին, որ փակ կը մնա մեր լված, մեր արացած հողերեն լարձրացող աղաղակին առջև: Արիացե՛ք, դարցազնացե՛ք, Էղև հայկազյան

վառապանձ ցեղին արժանավոր ժառանգորդները: Քոթափնցեի ձեռ հոգիներուն քմբիբը և եղե՛ք պատրաստ հաղթանակի արշավին... բող մեկդի կենան բոլոր քերականները, բոլոր սարկամիտները, բոլոր վախկառները, բող հեռանան բոլոր անոնք, որ հայրենի բազմաբարձրացան տեսիլքն ու երազը սպանած են իրենց սրտերուն մեջ: Սուրբ է մեր դատը, արգար և անմահ: Երանի՛ հավատացողներուն, երանի՛ ընտիրներու այն բանակին, որ պիտի հեզկի ինձի և պիտի տեր կանգնի հայրենի մեր հողերուն: Ձեզի կրքեմ ահա, — մոտ է ազատության արշավույսը...»:

Սփյուռքի (և ոչ միայն) հայության հակառակի նկատմամբ Խճխանի տաղնապետերը դրամատուրգիական ժանրում կերպավորում ստացան ինչպես «Կիլիկիո արեան», այնպես էլ «Մեռնիլը որքա՛ն դժվար է» և «Պարույր Հայկազն և Մովսես Խորենացի» բառերգություններում: Եթե «Մեռնիլը որքա՛ն դժվար է» բառերախաղի մեջ դրամատիկականի ու կամիկականի նեատարբիւ համադրումով է դրամատուրգը վերլուծում հայ մարդու միակը (ուպեդը) օտարին ծառայեցնելու և փոխանցելու, դրանով իսկ ուժացման սղբերգական իրողությունը, ապա այդ նույն խնդիրը «Պարույր Հայկազն և Մովսես Խորենացի» պատմական նշույթի մեջ արժարժում է մի էիչ այլ երանգով, դասական դրամայի օրենքներով: Ազգայինի և աղազգայինի, հայրենասիրության և հայրենիքի նկատմամբ անտարբերության երեույթների ընդգծումով, դրամատուրգը ուժացման երեույթի արմատները տեսնում է մեր պատմության հեռուներում, և մարդ-անհատի մեծության շարժանիչը կապում հայրենիքի, նկատմամբ ունեցած նվիրումի հետ:

Քաղաքագետ ԴԹ-ական բովանակներին ստեղծված իր ուր բառերախաղերի մեջ Խճխանը քարծրացնում է ոչ միայն ազգային, այլև ընդհանրապես մարդկային ու գուտ մարդկային, սոցիալական ու կենցաղային, քաղաքական ու ներանձնական հարցեր:

Քանաստեղծ, արձակագիր ու դրամատուրգ Խճխանի գրական ժառանգության կողքին գրականագետ-հննադատի նրա քաղմարիվ ուսումնասիրությունների ու հողվածների, ինչպես նաև ազգային, հասարակական ճարտարաչառքի հրապարակախոսական էլույթների դիտարկումը, հայ գրականության նրա շատ արժեքավոր դասագրքի ետե՛հ հատարների զոյության փաստը, սիրված մանկավարժի երկարամյա վաստակի հաշվառումը թերևս ավելի կամբողջացնե Մուշեղ Խճխանի ընդհանուր դիմանկարի կամ ավելի նիշու՝ դիմագծի մեր այս փորձը, բայց առաջաբանի սահմաններն էլ պիտի հարգե՛ք և ննարավորություն տալ ընթերցողին՝ ներկայացված նույնով ամբողջացնելու ի՛ր ապավորությունները այս մեծանուն, վաստակավոր գրողի, մրտավարականի մասին, որն արդեն կես դարից ավելի սիրվում, զննատվում է Սփյուռքում: Եվ միանգամայն հշմարիտ է «Նրաբերի» մեջ (Լաս-Անջելես) հայտնված այն միտքը, թե «Մուշեղ Խճխան, թեև Սփյուռքի գավառի, բայց իր սիրտը միշտ Հայաստանի նետ է եղած: Պիտի գա օր մը, երբ իր անունը Հավերժական Հայաստանի մեջ, իր ուրույն և հավերժ տեղը պիտի ունենա»: